ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՇԱՀ ԱԲԱՍ Ա-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՌՆԱԳԱՂԹԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Բանալի բառեր *– հայ բնակչության բռնագաղթ («մեծ սուրգուն»), Աբաս Ա, Արևելյան Հայաստան, Արևմտյան Հայաստան, Սեֆյան Պարսկաստան, Օսմանյան կայսրություն, ժողովրդագրական քաղաքականություն*

XVI-XVII դարի առաջին կեսին Օսմանյան կայսրությունը և Սեֆյան Պարսկաստանը միմյանց դեմ պատերազմների ընթացքում հաճախ են իրականացրել հայ բնակչության բռնագաղթեր, որոնցից ամենազանգվածայինը կազմակերպել է պարսից շահ Աբաս Ա-ն (1587-1629): Այս արարքը սկզբնաղբյուրներում ստացել է թուրքերեն «sürgün» (արտաքսում, տեղահանություն, բռնագաղթ) բառից ծագող «մեծ սուրգուն»[1] անվանումը: Նման գործելակերպը զաթիչների ժողովրդագրական քաղաքականության կարևոր տարրերից էր:

Բռնագաղթին զուգընթաց տեղի են ունեցել նաև հայ բնակչության ներքին տեղաշարժեր, որոնց ևս կանդրադառնանք: Այդ արհավիրքների հետևանքները հանգեցրել են բազմաթիվ բնակավայրերից հայ բնակչության իսպառ տեղահանության, հետևաբար ժողովրդագրական պատկերը որոշ տարածքներում ի նպաստ հայերի չի եղել:

Բռնագաղթի բոլոր ծալքերը վեր հանելու համար առաջ են քաշվում հետևյալ խնդիրները. որո՞նք էին բռնագաղթի պատճառները, ե՞րբ է այն սկսվել և քանի՞ փուլ է ունեցել, ո՞ր տարածքներն է ընդգրկել, ժողովրդագրական ի՞նչ հետևանքներ է ունեցել, մասնավորապես՝ որքա՞ն մարդ է բռնագաղթի ենթարկվել, և արդյո՞ք միայն հայերի նկատմամբ է դա իրականացվել:

Սույն հոդվածի ուսումնասիրության կենտրոնում տարածքային ընդգրկման խնդիրն է, որի լուսաբանման համար ուսումնասիրվել են նաև առաջին երեք խնդիրները, քանի որ դրանք սերտորեն փոխկապակցված են քննարկվող հարցի հետ:

Նախ անդրադառնանք բռնագաղթի պատճառներին և սկզբին: Ըստ XVII դ. հայ պատմիչ Առաքել Դավրիժեցու՝ թուրք-պարսկական հերթական պա-

---

[1] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխ.՝ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, գլ. ԺԶ, էջ 167, գլ. ԺԷ, էջ 183, 186, գլ. ԺԸ, էջ 194, «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, հիշ. թիվ 334, էջ 269-271:

տերազմի սկզբում՝ 1603 թ., Թավրիզը կորցնելուց հետո օսմանյան զորքը նահանջեց Նախիջևան և տեղեկանալով, որ վաղ թե ուշ շահը գրավելու է «զաշխարհս զայս», որոշեց թալանել «գեղականաց գաւառացն, և մանաւանդ Ջուղայու», որտեղից «ամենեքեան ելեալք ի բնակութեանց և ի շինամիջէ փախեան, և ելին ի լերինս՝ յայրս և յամուր վայրս տեսանել զվերջն թէ որպէս լինելոց է»[1]: Սա հայերի ներքին (ներհայաստանյան) տեղաշարժի օրինակ է և փաստորեն այս պատերազմի՝ հայ բնակչության վրա թողած ժողովրդագրական առաջին հետքն է: Այս առնչությամբ հետաքրքրական է պատմիչի այն տեղեկությունը որ «ի պահպանութիւն գաւառականացն Նախչուանու»՝ շահն ուղարկում է Չրաղ Սուլթան զորավարին, բայց մինչև նրա տեղ հասնելը թուրքական զորքը թալանում է «ի մերձակայ գեղօրէիցն»[2]: Սա վկայում է, որ շահն ի սկզբանե առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել գավառի բնակչության նկատմամբ և մտադիր է եղել նրան օգտագործել իր հետագա ռազմավարական ծրագրերում:

Նախիջևանի գրավումից հետո պարսկական բանակը շարժվում է Երևանի ուղղությամբ: Խիզանում ընդօրինակված Ավետարանի 1604 թ. հիշատակարանում Մարտիրոս գրիչը դեպքերի առնչությամբ համակրանքով է գրում շահ Աբասի մասին՝ շեշտելով, որ նա Երևանի ուղղությամբ արշավանքի ժամանակ խնայել է «ի քրիստոնեայսն», այն է՝ հայերին[3]: Նման հիշատակումների իսկությունը հավաստիացնելու համար հարկ ենք համարում նշել, որ միջնադարյան հայ հեղինակները որպես հայերին հոմանիշ օգտագործել են «քրիստոնյա» տերմինը: Այսպես օրինակ, Առաքել Դավրիժեցին հայ էթնոնիմին համարժեք օգտագործում է «քրիստոնեայք», «ազգն քրիստոնէից», «ազգն Հայոց», «ազգս Հայոց», «տունս Արամեան», «ազգաւ Հայ և հաւատով քրիստոնեայ» արտահայտությունները[4]: Նույն մոտեցումն է նկատվում ուշմիջնադարյան այլ հեղինակների, մասնավորապես հիշատակարանների գրիչների մոտ[5]:

Փաստորեն, արևելահայկական տարածքները գրավելիս շահը փորձում էր պահպանել օսմանյան տիրապետության ժամանակահատվածում հայերի շրջանում իր նկատմամբ ձևավորված համակրալից վերաբերմունքը: Այդ տրամադրություններն ի հայտ էին եկել երկու պատճառով. նախ օսմանյան վարչակարգն Արևելյան Հայաստանում աչքի ընկավ հարկային ավելի ծանր քաղաքականությամբ, և, բացի այդ, արևելահայ առևտրական վերնախավը՝ խոջայությունը, տնտեսական սերտ կապեր էր հաստատել պարսկական

---

[1] **Առաքել Դավրիժեցի**, գլ. Գ, էջ 66:

[2] Նույն տեղում, էջ 66-67:

[3] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, թիվ 173, էջ 143-144:

[4] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, գլ. ԻԴ, էջ 239, 240-241, 254, 256, 257, 258, գլ. ԻԷ, էջ 288, գլ. ԻԹ, էջ 311, 322, 324, գլ. ԼԷ, էջ 378:

[5] Տե՛ս օրինակ՝ 1575 թ. հիշատակարան // ՄՄ, ձեռագիր թիվ 3566, էջ 132բ:

արքունիքի հետ, քանի որ Սեֆյանների տարածքով էր անցնում նրանց առևտրական տարանցման ուղու զգալի մասը[1]:

Այսպիսով, առաջ է գալիս հետևյալ հարցը. շահ Աբասն արդյո՞ք իր արշավանքի սկզբում ծրագրել է իրականացնել հայ բնակչության զանգվածային բռնագաղթ, թե՞ պատերազմական գործողություններն էին նրան դրդել դիմելու նման քայլի: Ստորև մեր ներկայացրած դեպքերի հաջորդականությունը և ժամանակագրական ու տարածքային փուլաբաժանումը ապացուցում են, որ բռնագաղթը նախապես ծրագրված է եղել, թեև ծավալային ընդգրկման խնդիրը, անշուշտ, պայմանավորված է եղել արդեն պատերազմական գործողությունների ընթացքով:

Երևանի պաշարման ժամանակ շահ Աբասը նվաճում է Արարատյան կուսակալությունը, «որ էր շէն և լի ամենայն բարեօք՝ ուստի լցեալ լինէր ամենայն պիտոյք բանակին Պարսից, մարդկան և անասնոց»[2]: Վարչամիավորի շենության և ամենայն բարիքներով լիության հիշատակությունը վկայում է, որ միջնադարում այդտեղ բնակչության արագ վերարտադրման համար առկա էին անհրաժեշտ պայմաններ. քանիցս կրկնված բռնագաղթերից հետո բնակչությունն այստեղ արագ վերականգնվում էր[3]:

Պարսից բանակը Երևանի պաշարման ընթացքում օգտագործում է Արարատյան կուսակալության հայ բնակչության ներուժը: Այս առնչությամբ Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ յաւուրս յայսոսիկ հրամայեաց շահն զօրացն Պարսից գնալ յերկիրն Այրարատու՝ և յամենայն շրջակայ գաւառս նորա, հանել յամենայն տեղեաց արս՝ որ ասի ըռադաթ[4], եթէ ի քրիստոնէից իցէ, և եթէ ի մահմետականաց, որոյ և իցէ ազգաց, ժողովել և բերել ի բանակն Պարսից, զի ընդ զօրացն Պարսից մարտակից լիցին, զսիբայն[5] քշել և այլ գործակցութեամբ օգնական լինել զօրացն Պարսից: Եւ ի ժամ պատերազմին յորժամ երիշ[6] առնէին և կամ զսիբայն ի վեր քշէին, զքրիստոնեայսն յառաջ խաղացուցեալ ընդդէմ հրոյ և սրոյ մատուցանէին, որովք կոտորեալք լինէին

---

[1] Տե՛ս **Blow D**., Shah Abbas: The Ruthless King Who Became an Iranian Legend, London-New York, 2009, p. 77, **Herzig E**., The Deportation of the Armenians in 1604-1605 and Europe's Myth of Shah 'Abbas I // "Pembroke Papers", 1990, n° 1, p. 59-71: Սեֆյանների քաղաքական, գաղափարաֆիլիսոփայական փոփոխությունների և այդ համատեքստում շահ Աբասի քաղաքականության նրբերանգների մասին տե՛ս **Mitchel C**., The Practice of Politics in Safavid Iran: Power, Religion and Rhetoric // "BIPS Persian Studies Book Series", vol. 1, London-New York, 2009, p. 189-190:

[2] **Առաքել Դավրիժեցի**, գլ. Գ, էջ 69-70:

[3] Այս պայմանների մասին առավել մանրամասն տե՛ս **Մալխասյան Մ**., Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում ԺԶ դարում // «Էջմիածին», 2016, թիվ Դ, էջ 70-88:

[4] Կարծում ենք՝ արաբերեն «ռաիյյաթ» բառի աղավաղված ձևն է, որ թարգմանաբար նշանակում է հարկատու բնակչություն, քանի որ մեջբերված հատվածում խոսքը աշխատունակ տղամարդկանց մասին է:

[5] Արաբերենից թարգմանաբար՝ պաշարողական մեքենա:

[6] Թուրքերենից թարգմանաբար՝ հարձակում:

ազգն Հայոց յերկուց կողմանց՝ յառաջուստ յՕսմանցւոց՝ և յետուստ ի Պարսից»[1]: Փաստորեն, այս փուլում տեղահանվում և Երևանի բերդի մոտ էին բերվում Արարատյան կուսակալության հարկատու, այն է՝ աշխատունակ տղամարդիկ:

Բռնի տեղահանության այս առաջին փուլում, ըստ Առաքել Դավրիժեցու, երկու ամսում Ամիրգունա խանը, բացի Արարատյան կուսակալությունից, նաև «զերկիրն Գանձակայ՝ ուր և կարաց հասանել, հրոյ ճարակ տուեալ և սրով մաշեալ, զորս կոտորեաց և զորս աւարեալ գերեաց աղխիւք և ընտանեօք և բերեալ էած յԵրևան ի լիութիւն և ի յոփութիւն բանակին Պարսից»[2]: Գանձակի ուղղությամբ բռնի տեղահանության ժամանակ, ի տարբերություն Արարատյան կուսակալության, մասնակի կոտորածի մասին պատմիչի հիշատակությունը ցույց է տալիս, որ այստեղ հնարավոր է՝ բնակիչները դիմադրության փորձ են արել, ինչի պատճառով արժանացել են նման վերաբերմունքի: Ընտանիքի անդամների և նրանց ունեցվածքի բռնի տեղափոխումը պարսից զորակայան նշանակում է, որ նրանց օգտագործել են որպես բանակը սպասարկող անձնակազմ:

Այսպիսով, դեռևս մինչև օսմանյան հիմնական ուժերի ժամանումն արդեն սկսվել էր բռնագաղթի առաջին փուլը, որը, փաստորեն, առայժմ ներքին բնույթ էր կրում՝ Հայաստանի մի տարածքից մեկ այլ հատված: Արարատյան կուսակալության բոլոր կողմերից Երևանի մատույցներ բերված բնակչությունից հենց հայերն էին շահագործվում: Առհասարակ, բռնագաղթի այս փուլի նպատակը Երևանը պաշարած պարսկական բանակի սպասարկումն էր: Դեպքերի ականատես պորտուգալացի ավգուստինյան հոգևորականների խումբն առաջնորդող Անտոնիո դի Գոուվեան նույնիսկ Առաքել Դավրիժեցուց ավելի կոնկրետ ու մռայլորեն է նկարագրում հայերի զրկանքները: Ըստ նրա՝ շուրջ 12 հազար հայ արհեստավորներ բերվել էին Երևանի շրջակայքից, այսինքն՝ Արարատյան կուսակալությունից, որպեսզի կառուցեն պաշարողական ենթակառուցվածքները, և անգամ պարենի սպառման, ձմեռվա ցրտի ու թուրքական կայազորից հակազդման պայմաններում շարունակել են աշխատել ու բազմաթիվ կորուստներ են կրել[3]:

Բացի Երևանի մատույցներ բերված հայ բնակչությունից՝ ծանր դրության մեջ էին նաև քաղաքում գտնվող հայերը: Ընդ որում՝ Երևանի բնակչությունը

---

[1] **Առաքել Դավրիժեցի,** գլ. Գ, էջ 70: Այս մեջբերման վերջնամասում ևս մեկ անգամ տեսնում ենք «զքրիստոնեայսն» և «ազգն Հայոց» համարժեք կիրառությունը՝ որպես էթնոնիմ:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս **Di Gouvea**, Relation des Grandes Guerres et Victoires Obtenues par Le Roy de Perse Chah Abbas, Rouen, 1646, p. 237-245 (հղումը ըստ՝ **Blow D**., նշվ. աշխ., էջ 78-79, 249): Ռազմական պատրաստությունների մասին մանրամասն տե՛ս նաև **Eskandar Beg Monshi**, Tarikh-e ‘Alamara-ye Abbasi (The History of Shah Abbas the Great), translated by Roger M. Savory, vol. II, Persian Heritage Series, n° 28, Colorado, Wetview Press, Boulder CO, 1978, p. 844-846 (հղումը ըստ՝ **Blow D**., նշվ. աշխ., էջ 79, 249):

կորուստներ է կրել ոչ միայն բուն պատերազմական գործողություններից, այլև սովից: Խիզանում ընդօրինակված Ավետարանի 1604 թ. հիշատակարանում գրիչ Սարգիս քահանան հետաքրքիր տեղեկություն է հայտնում առ այն, որ Երևանի ութամսյա պաշարման ընթացքում «բազումք ի ներս քաղաքին սովալըլուկ և սովամահ լինէին և զմահացեալսն քարավէժ առնէին»[1]: Սա բացատրվում է հենց շահի մարտավարական մոտեցմամբ, քանի որ նա մտադրվել էր սովամահ անելու ճանապարհով ստիպել օսմանյան կայազորին հանձնվել[2]:

Այս իրադարձությունների ժամանակ հետաքրքրական է Հայաստանում հաստատված քրդական ցեղերի տեղաշարժերի հնարավորության ուսումնասիրությունը: Ըստ դեպքերի ժամանակակից, պարսից պալատական պատմիչ Իսքանդար բեգ Մունշիի՝ Երևանի պաշարման ժամանակ Ամիրգունա խանի դիվանագիտական ջանքերի շնորհիվ քրդական հաքքարի, մահմուդի, դունբուլի և այլ ցեղերի աշիրեթապետեր եկել են Երևան և հպատակություն հայտնել շահին[3]: Այս ցեղերը բնակվում էին այն տարածքներում, որոնք մինչև 1590 թ. Կոստանդնուպոլսի պայմանագիրը թուրք-պարսկական սահմանի արևելյան հատվածն էին կազմում: Հաքքարի ցեղը զբաղեցնում էր պատմական Աղբակ գավառի և դրանից հարավ ընկած շրջանները, մահմուդին՝ դրանից դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք, իսկ դումբուլին՝ հաքքարիից դեպի հյուսիս-արևելք՝ դեպի Խոյ ընկած տարածքները[4]: Այս ցեղերը, փաստորեն, մինչև շահի արշավանքը շուրջ երկու տասնամյակ եղել են օսմանյան հպատակներ, իսկ այդժամ իրավիճակը կտրուկ փոխվում էր: Նկարագրելով Վանի օսմանյան բեգլարբեգի ստորակա, Խոշաբի և Կարահիսարի կառավարիչ Սուլեյման Բեգ Մահմուդիի՝ շահին հպատակվելու հանգնամանքները՝ Իսքանդար բեգ Մունշին նշում է, որ քուրդ ամիրաներին բնորոշ էր հավատարմություն հայտնելը այն ուժին, որը գերիշխող էր դառնում, ինչը շահը գիտակցում էր, սակայն ընծաներով և խան տիտղոսը շնորհելով՝ հետ է ուղարկում իր տիրույթները[5]:

Այդ նույն ժամանակ օսմանյան զորքերն Էրզրումի և Վանի ուղղությամբ զորաշարժեր են կազմակերպել՝ Սեֆյանների դեմ վճռական գործողությունների նախապատրաստվելով, և այդ պատճառով հայ բնակչությունը զգալի նեղություններ է կրել Վանի դաշտում Ահմադ փաշայի զորքերի գործողու-

---

[1] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, թիվ 175, էջ 147:

[2] Տե՛ս **Blow D.**, նշվ. աշխ., էջ 78:

[3] Տե՛ս **Փափազյան Հ.**, Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դ.) // «ԼՀԳ», 1977, թիվ 1, էջ 30, «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 97:

[4] Առավել մանրամասն տե՛ս **Բաղալյան Գ.**, Վանի էյալեթի քրդական իշխանությունները (հուքյումեթները) 14-րդ դ. - 19-րդ դ. 40-ական թթ. // «Իրան-Նամէ», 1998, թիվ 2-3, էջ 23-37:

[5] Տե՛ս **Eskandar Beg Monshi**, v. II, p. 856:

թյուններից[1]: Ակնհայտ է, որ զորքի պարենավորման խնդիրը պետք է լուծվեր հենց դաշտի հայ բնակչության գյուղատնտեսական արտադրանքի միջոցով: Որոշ անհաջող գործողություններից հետո Ահմադ փաշան ստիպված նահանջում է Մշո դաշտ, որտեղ շուտով դիմավորում է օսմանյան հիմնական ուժերով այստեղ ժամանող Ջղալ-օղլու Սինան փաշային[2]:

Երևանի պաշարման ձգձգման պատճառով շահը կազմակերպում է ոչ միայն Արարատյան կուսակալության և Գանձակի, այլև Արևմտյան Հայաստանի՝ Արարատյան կուսակալությանը սահմանամերձ օսմանյան վարչամիավորների հայ բնակչության բռնագաղթը, որը, փաստորեն, դրա երկրորդ փուլն էր: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ 1603-1604 թթ. ձմռանը շահը «առաքեաց զօրագլուխս բազում զօրօք ի կողմն Արզրումայ որք գնացեալ աւերեցին զերկիրն Բասենու և զԽնուսայ և զաշտն (զդաշտն – *Մ. Մ.*) Արզրումայ և զայլս ուր և կարացին հասանել, քանդեալ, աւերեալ, այրեալ և ապականեալ զերկիրն և զշէնսն, և զինչս և զստացուածս կողոպտեալ, և զարս սպանեալ, և զկանայս և զմանկունս գերեցուցեալ, բերին յԵրևան ի բանակն իւրեանց: … Սոյնպէս և յերկիրն Արճիշու առաքեաց զօրս, որք գնացեալ արարին ըստ վերոյասացելումդ աւար և գերութիւն և ապականութիւն ազգին Հայոց ի ժամանակս ձմերայնոյ»[3]:

Երբ հաստատվում է տեղեկությունը, որ Սինան փաշան բանակել է Մշո դաշտում, շահը զորք է ուղարկում Կարսի և Զարիշատի գավառներ՝ կարգադրելով ոչնչացնել այդտեղի հացահատիկի ցանքատարածությունները և արոտավայրերը, որպեսզի դեպի արևելք աճապարող օսմանյան բանակը չկարողանա դրանցից օգտվել և պարենավորվել: Ըստ Իսքանդար Մունշիի՝ 1604 թ. ամռանը պարսից զորքերն ասպատակում, կողոպտում և հրկիզում են Կարսի ու Զարիշատի ցանքսերն ու արոտավայրերը՝ մինչև Բասենի Հասան-Կալա բերդը, և երկու-երեք հազար ընտանիք հայեր ու քոչվոր ցեղեր քշում դեպի Իրաք, իսկ շուրջ 20 հազար «ոչ մուսուլմաններ» իսլամացվում են[4]: Ինչպես նկատում է Հ. Մուրադյանը, XVII դ. ֆրանսիացի ճանապարհորդ Ժան-Բատիստ Տավերնիեն բռնագաղթից հետո նկարագրում է նշված տարածաշրջաններից հատկապես Կաղզվանի գավառի աղետալի վիճակը, որը դարձել էր ավերակ և անմարդաբնակ[5]: Ուսումնասիրելով սկզբնաղբյուրի անգլերեն

---

[1] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, թիվ 175, էջ 147:

[2] Տե՛ս **Eskandar Beg Monshi**, v. II, p. 855-856:

[3] **Առաքել Դավրիժեցի**, գլ. Գ, էջ 72:

[4] Տե՛ս **Eskandar Beg Monshi**, v. II, p. 856-857: ՀՀ ԳԱԱ հրատարակած հայոց պատմության թե՛ հին և թե՛ նոր բազմահատորյակներում նշված հատվածը վրիպմամբ թարգմանված է ոչ թե դեպի Իրաք բռնագաղթի ուղենշմամբ, այլ՝ դեպի Արարատյան կուսակալության տարածք, այնտեղից էլ՝ Պարսկաստան: Տե՛ս «Հայոց պատմություն», հ. II, գիրք II, Երևան, 2014, էջ 628:

[5] Տե՛ս **Մուրադյան Հ.**, Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգի Կաղզվանի գավառում (17-19-րդ դարի 1-ին երեսնամյակին) // «Կանթեղ», 2001, թիվ 4, էջ 171-177: Կարսի

հրատարակությունը՝ տեսնում ենք, որ ճանապարհորդը Վերին Բասենի Չոբանի (Հովվի) կամրջից մինչև Կարսի շրջան մոտենալը հիշատակում է անտառոտ լեռներ և ամայի շրջաններ, որտեղ ընդամենը մեկ գյուղ է տեսել[1]: Այս պատկերի մասին է վկայում նաև Հ. Առաքելյանի մեջբերած Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մի Ավետարանի հիշատակարան, ըստ որի՝ Երևանի գրավումից (գերեվարվածների ժամանման պահին բերդն արդեն գրավված էր) հետո շահ Աբասը Կարսի նահանգից գերել է ավելի քան 20 հազար հայ[2]:

Բասենի, Կարսի ու Զարիշատի տեղահանությանը զուգահեռ՝ Արծկեի անհաջող պաշարումից հետո պարսից զորահրամանատար Ալահվերդի խանը «զամենայն երկիրն Արծկէոյ հաւասար աւերեաց և հրդէհ արկեալ այրեաց. և զամենայն արու արս կոտորեաց՝ և զինչս, և զստացուածս՝ զուստերս և զդստերս և զկանայս յաւար և ի գերութիւն առեալ: Եւ ելեալ անտի եկն յԱրճէշ և ի Բերկրի, և ի Վան և յամենայն գաւառս նոցա արար այնպէս»[3]: Այս ամբողջ բազմությունը և բռնագրավված անասունները նա տեղափոխեց Երևանի մոտ: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ միայն Արծկեից, Արճեշից, Բերկրիից և Վանից գերեվարված ու Երևանի մոտ պարսից զորակայան բերված հայերի թվաքանակը, չհաշված զոհվածներին, 23 հազար էր[4]: Հետաքրքրական է, որ հայ պատմիչը բռնագաղթի այս փուլում Էրզրումի և Վանի նահանգներից տեղահանության առնչությամբ շեշտում է արական սեռի ներկայացուցիչներին կոտորելու մասին: Սա գուցե զանգվածային չի եղել, սակայն տեղահանության հապճեպ և բռնի բնույթը ցույց է տալիս, որ այն անկասկած որոշակի դիմադրական արձագանք էր ստանալու Արևմտյան Հայաստանում:

Ուսումնասիրողները ամայացման այս քաղաքականությունը անվանել են ռազմագիտական՝ «այրված հողի» մարտավարություն տերմինով[5]: Կանադացի իսլամագետ Ռ. Աբիսաաբը պնդում է, որ սահմանակից շրջանների ամայացումը, բնակչության տեղահանումն ու նույնիսկ բռնի իսլամացումը եղել են շահ Աբասի քաղաքականության կարևոր տարրը, և նկատում, որ

նահանգից պարսիկները բռնագաղթեր են կազմակերպել նաև հաջորդ տարիներին: Տե՛ս *նույնի*՝ Ժողովրդագրական տեղաշարժերը Կարսի նահանգում XVI-XIX դարի առաջին կեսին // «Հայոց պատմության հարցեր», թիվ 5, Երևան, 2005, էջ 61-62:

[1] Տե՛ս The Six Voyages of John Baptista Tavernier, A Noble Man of France now living, Through Turky into Persia, and The East-Indies, Finished in the Year 1670. Giving an Account of the State of those Countries, Made English by F. P., London, 1678, book I, p. 9:

[2] Տե՛ս **Առաքելեան Հ.**, Պարսկաստանի հայերը. նրանց անցեալը, ներկան եւ ապագան, մաս Ա, Վիեննա, 1911, էջ 63-64:

[3] **Առաքել Դավրիժեցի**, գլ. Գ, էջ 74:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 228, **Perry J**., Forced Migration in Iran during the Seventeenth and Eighteenth Centuries // "Iranian Studies", 1975, vol. 8, n° 4, p. 199-215, **Abisaab R**., Converting Persia: Religion and Power in the Safavid Empire, London-New York, 2004, p. 61, **Newman A**., Safavid Iran: Rebirth of a Persian Empire, London-New York, 2009, p. 60-61:

Իսքանդար Մունշին նրա այս քաղաքականությունը հիշատակում է ավելի հաճախակի, քան նրան նախորդած որևէ տիրակալի պարագայում[1]:

1604 թ. հունիսին շահ Աբասը գրավում է Երևանը և այն հանձնում ղզլբաշ կաջար մեծ ցեղի աղջա-կոյունլու օյմաղից Ղազվինի պաշտոնյա Ամիրգունա խանին[2]: Քաղաքում շարունակվում էր սովը: 1605 թ. հիշատակարաններից մեկում ձեռագիրն ստացող Հայպաթը և Ասլանը նշում են, որ երբ Աբասը Երևանը գրավեց, «սովն զչորս կողմ աշխարհ... բազումք մեծատունք սովամահ կորեան...»[3]: Այդ նույն դեպքերի առնչությամբ Քաշաթաղի մելիք Հայկազի ստացած Ավետարանի 1606 թ. հիշատակարանում նշվում է, որ շահը Երևանի բերդը գրավելիս կոտորել է 12 հազար «մանկտիս և կանայս»[4]: Որևէ այլ սկզբնաղբյուրում կոտորածի մասին տեղեկություն չկա, ուստի սա կարող է միայն Երևանի պաշարման ժամանակ սովից և պատերազմական գործողություններից զոհվածների ընդհանուր թիվը լինել:

Այնուհետև կազմակերպվում է բռնագաղթի երրորդ փուլը: Երևանի գրավումից հետո շահ Աբասը բնակչությանը Պարսկաստան տեղափոխելու նպատակով հրամայում է. «…որքան ժողովուրդք, որք դարիպականքն են և պանդուխտք, և այնք ևս որք ի գերութենէ ազատեալք են, – եթէ քրիստոնեայք իցեն, եթէ մահմետականք, եթէ եբրայեցի, – զոր բերին խաներն… եթէ Ամիրգունա խանն որ եբեր ի Գանջայու երկրէն, եթէ Ալահվէրտի խանն, որ եբեր յԱրծկէոյ և յԱրճիշոյ և ի Բերկրու և ի Վանայ, եւ թէ միւս խաներն, որք միւսանգամ բերին յԱրիճշոյ, ի Մանազկերտու, յԱլաշկերտու, և ի Մակուայ, եթէ միւս խաներն որք բերին ի Կարսայ, ի Կաղզվանայ, ի Բասենու, յԱրզրումայ, ի Խնուսայ. և զայլս զամենեսեան, որք յայլ ուստեքէ լեալ էին, զսոսա զամենեսեան հրամայեաց զի խոյզ արարեալ գտցեն յերկրին Երևանու...»[5]: Առաքել Դավրիժեցու այս տեղեկությունից ակնհայտ է, որ շահը հրամայել է Հայաստանի տարբեր հատվածներից Արարատյան կուսակալություն բերված բազմությունը հավաքել և կենտրոնացնել մի տեղ՝ հետագայում Պարսկաստան տանելու համար: Ընդ որում, ակնհայտ է նաև, որ մարդկանց մի մասը կարողացել էր ազատվել գերությունից, որոնց նույնպես պետք է գտնեին և բռնագաղթի ենթարկեին: Այս մանրամասները ևս մեկ անգամ հաստատում են մեր այն տեսակետը, որ բռնագաղթը տեղի է ունեցել մի քանի փուլերով:

Այն, որ Արարատյան կուսակալությունում բռնագաղթի վճռական փուլի նախօրեին ոչ միայն տեղի հայերն էին գտնվում, այլև Արևմտյան Հայաստանից և Գանձակի վարչամիավորից տեղահանվածները, հաճախ աչքաթող է

---

[1] Տե՛ս **Abisaab R.**, նշվ. աշխ., էջ 61-62, 194, ծանոթ. 61:

[2] Տե՛ս **Փափազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 29-30:

[3] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, թիվ 206, էջ 168:

[4] Տե՛ս նույն տեղում, թիվ 258, էջ 206-207:

[5] **Առաքել Դավրիժեցի**, գլ. Գ, էջ 75-76:

արվում ուսումնասիրողների կողմից, սակայն Առաքել Դավրիժեցու և մի շարք հիշատակարանների տվյալները հնարավորություն են ընձեռում վերհանելու այդ կարևոր իրողությունը։

Տեղեկանալով օսմանյան զորահրամանատար Ջղալօղլի Սինան փաշայի՝ Էրզրումից դեպի Արարատյան կուսակալություն շարժվելու մասին՝ շահ Աբասը Շիրակավանից Աղջակալա (Երվանդակերտ) է գալիս և «զոր ի վաղ ժամանակաց ունէր ի մտի զքշելն ազգին քրիստոնէից և զաւերելն աշխարհին Հայոց անդ յայտնեաց խորհրդակցաց իւրոց։ Քանզի գիտէր ի միտս իւր, թէ ո՛չ կարէ պատերազմաւ զդէմ ունել Սինան փաշային, այսինքն Ջղալօղլի Սարդարին։ Վասն որոյ հրամայեաց զամենայն բնակիչս աշխարհին Հայոց, եթէ քրիստոնեայ, եթէ հրէայ, եթէ մահմետական, քշել յաշխարհն Պարսից։ Զի եկեալ Օսմանցւոցն անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ։ Եւ ո՛չ գտցի կերակուր և ռոճիկ և այլ ինչ պիտոյք նոցա և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեսցին զօրքն Օսմանցւոց։ Նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անզերծանելի հարկատուք՝ ծառայք և հողագործք մինչև ցյաւիտեան»[1]։ Առաքել Դավրիժեցին, փաստորեն, մի կողմից նշում է, որ շահը վաղուց էր նպատակադրվել «ազգին քրիստոնէից» քշել Պարսկաստան, իսկ մյուս կողմից այդ քայլին էր դիմում, քանի որ չէր կարող դիմադրել Սինան փաշային։ Փաստորեն, փաշան պարենավորման հնարավորություն չէր ունենալու, իսկ Պարսկաստանը «ցյաւիտեան» ստանում էր հարկատու հողագործ բնակչություն։

Իսքանդար Մունշին ևս նշում է, որ Ամիրգունա և Արդաբիլի Ջոլֆեղար խաները հրաման են ստանում Մշո դաշտից Երևանի ուղղությամբ արշավանքի նախապատրաստվող Ջղալօղլի Սինան փաշայի արշավանքին ընդառաջ Արարատյան կուսակալության և Նախիջևանի շրջակայքի բնակչությունը տեղահանել, բնակավայրերն ավերել, ցանքսերն ու հացահատիկի պաշարները հրկիզել[2]։

Նույն պատճառներն է նշում նաև բռնագաղթից հետո Հայաստան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենը։ Ըստ նրա՝ Երևանի և Նախիջևանի դաշտերն ու այգիները հրկիզվեցին, շինություններն ավերվեցին, բնակչությունն ու անասնահոտերը տեղափոխվեցին Պարսկաստան, և նույնիսկ ջրի աղբյուրները թունավորվեցին, որպեսզի օսմանյան բանակը Պարսկաստանի դեմ արշավանքների ժամանակ զրկվեր պարենավորման հնարավորություններից[3]։

Թուրքական սկզբնաղբյուրները ևս հավաստում են, որ երբ 1604 թ. ձմռանը Ջղալե Զադե (Ջղալօղլի) Սինան փաշան հասնում է Կարս, «ճանա-

---

[1] **Առաքել Դավրիժեցի**, գլ. Դ, էջ 77։

[2] Տե՛ս **Փափազյան Հ.**, նշվ. աշխ., էջ 30։

[3] Տե՛ս **Ջուլալյան Մ.**, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990, էջ 150-151։

պարհին եղած ռայաների [հայերի] գյուղերի ու ավանների բնակիչները աքսորված լինելով, երկիրը մնում է անմշակ: Երկրում սով է տիրում»[1]:

Ինչպես արդեն նշեցինք, բռնագաղթի պատճառներից էր նաև այն, որ պարսից շահը նպատակ ուներ հայ վաճառականների միջոցով ընդլայնել Պարսկաստանի արտաքին առևտրական կապերը, ինչպես նաև հայ արհեստավորների և երկրագործների միջոցով զարգացնել երկրի հետամնաց տնտեսությունը[2]:

Հ. Առաքելյանը բռնագաղթի այս փուլի պատճառների թվում միայն օսմանյան բանակի պարենավորման խափանումը բավարար չի համարում, քանի որ այդ պարագայում հարկ չկար բռնագաղթի ենթարկելու Ատրպատականի հայերին: Այս համատեքստում նա մեջբերում է Շարդենի տեղեկություններն այն մասին, որ շահը Երևանի, Նախիջևանի, Ջուղայի և Բարձր Հայքի (այն է՝ Էրզրումի նահանգի) հայերին տեղահանեց և տարավ իր մայրաքաղաքը՝ այդտեղի առևտուրն աշխուժացնելու համար, քանի որ եվրոպացի վաճառականների համար հայերը կրոնակից էին, ուստի և՝ ավելի համակրելի[3]: Նա հույս ուներ նաև մեծ հարված հասցնել Օսմանյան կայսրության մետաքսի առևտրին՝ փոխարենը զարգացնելով մետաքսի սեփական առևտուրը, որը Հայաստանի տարածքից տեղափոխվելու էր հարավ՝ ընդհուպ Պարսից ծոց[4]: Փաստորեն, այս բռնագաղթի միջոցով պարսից շահը հեռահար նպատակներ էր հետապնդում՝ ցանկանալով հզորացնել իր երկիրն ու միաժամանակ թուլացնել թշնամուն:

Բռնագաղթի հիմնական փուլը, ըստ Առաքել Դավրիժեցու, սկսվել է Հայոց ՌԾԴ թվականի, այն է՝ 1604 թ. օգոստոսին՝ հիմնական թափն առնելով Խաչվերացից հետո՝ աշնանը[5]: Այս համատեքստում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Հին Ջուղայում սկսված և Սպահանում ավարտին հասցված մի «Յայսմաւուրք»-ի հիշատակարանը, որտեղ գրիչ Արիստակես աբեղան հայտնում է, որ այն Ջուղա գյուղաքաղաքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում է գրել 1604 թ. հունվարի 20-ից մինչև հունիսի 4-ը,

---

[1] «Թուրքական աղբյուրներ Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Բ, կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1964, էջ 94:

[2] Տե՛ս "The Cambridge History of Iran", vol. 6, Cambridge University Press, 1986, p. 271, **Blow D**., նշվ. աշխ., էջ 79-80, **Newman A**., նշվ. աշխ., էջ 61, **Canby Sh**., Shah 'Abbas: The Remaking of Iran, London, 2009, p. 64-65, **Aslanian S**., From the Indian Ocean to the Mediterranean: the Global Networks of Armenian Merchants from New Julfa, Berkeley, 2011, p. 33-34:

[3] Տե՛ս **Առաքելեան Հ**., նշվ. աշխ., էջ 76-78:

[4] Տե՛ս **Newman A**., նշվ. աշխ., էջ 61: Համաշխարհային տարանցիկ առևտրի հետ առնչության մասին մանրամասն տե՛ս **Baghdiantz McCabe I**., The Shah's Silk for Europe's Silver: The Eurasian Trade of the Julfa Armenians in Safavid Iran and India (1530-1750), University of Pennsylvania Armenian Texts and Studies, Book 15, Atlanta, 1999:

[5] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, գլ. Դ, էջ 79: Տե՛ս նաև **Դանեղյան Լ**., Հայերի բռնագաղթն Իրան 17-րդ դարում (Ա. Դավրիժեցու տվյալներով) // «ԼՀԳ», 1969, թիվ 8, էջ 63-75: Հմմտ. «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, էջ 146, 302:

իսկ ավարտել է 1605 թ. Սպահանում[1]: Սա հաստատում է Առաքել Դավրիժեցու և մանր ժամանակագիրների այն տեղեկությունը, որ բռնագաղթյալների ալիքը Սպահան է հասել հաջորդ տարի, ուստի Ջուղայի բռնագաղթը 1604 թ. ամռանն է սկսվել: Միաժամանակ անընդունելի ենք համարում բռնագաղթն արհեստականորեն 1605 թ. տանելը՝ հղելով լոկ Խարբերդի Գահլու գյուղից Հովհաննես գրիչի կատարած 1606 թ. թվագրումը, քանի որ նույն գրիչը 1605 թ. նշում է, որ ինքը Սպահան տարվածների խմբում է եղել[2]: Այսպիսով, բռնագաղթի վճռական փուլը սկսել է 1604 թ., իսկ բռնագաղթի ենթարկվածների բազմությունը տեղ է հասել միայն 1605 թ.:

Գաղթի կազմակերպման գործում ներգրավվել են նաև հայոց մեծամեծները, որոնք, սակայն, առաջարկել են գաղթի գնալ գարնանը, քանի որ գույքը, ծերերին ու մանուկներին տեղափոխելու համար անհրաժեշտ քանակով փոխադրամիջոցներ չկային[3]: Այդուհանդերձ, շահը զորապետներին կարգել է տարբեր ուղղություններով և հրամայել բոլոր մարդկանց գերեվարել: Ամիրգունա խանին հանձնարարվել է Արարատյան կուսակալության գործը, և նա բերել է բոլորին Արարատյան դաշտ, որտեղ, ըստ Առաքել Դավրիժեցու, Գառնու լեռներից մինչև Երասխ գետը լայնությամբ ձգվում էր գաղթականության բանակը, իսկ երկարությունը մեկ օրվա ճանապարհ էր զբաղեցնում[4]: Ընդ որում՝ պարսից բանակը ոչ միայն քշում էր բնակչությանը բոլոր բնակավայրերից, այլև Արևմտյան Հայաստանում իրականացրածի օրինակով վերացնում հացահատիկի պաշարները[5]:

Ըստ Առաքել Դավրիժեցու՝ Ամիրգունա խանի ուղարկած ուժերը Գառնի գյուղում թալան են սկսում և հափշտակում են «զզաւակս քրիստոնէից»[6]: Սա տեսնելով՝ գյուղացիները համախմբվում են և դուրս քշում զորականներին, և միայն Ամիրգունա խանն է կարողանում հնազանդեցնել նրանց ու միացնել գաղթական զանգվածներին[7]: Գառնի գյուղից բացի՝ Գառնիի գավառում կային նաև այլ գյուղեր, «որք ամրացեալք են յամուր վայրս լերանց երկրիս՝ յայրս և ի ծերպս քարանձաւաց»[8]: Հավուց թառի վանքի Մանուել եպիսկոպոսը և Գեղարդավանքի Աստվածատուր եպիսկոպոսը մի խումբ հոգևորականների և աշխարհականների հետ որոշ պարենով ամրացան Գեղարդի ձորի քարայրներում, որտեղ, ի վերջո, խանը բռնեց նրանց: Մարդկանց մի մասը, այդ թվում՝ Մանուել եպիսկոպոսը, սրի քաշվեց, մյուսները քշվեցին գաղթականության

---

[1] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, թիվ 226, էջ 183-184:

[2] Տե՛ս նույն տեղում, թիվ 304, էջ 236:

[3] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, գլ. Դ, էջ 78:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 78-79:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 79:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 83:

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] Տե՛ս նույն տեղում:

ընդհանուր զանգվածի մոտ[1]: Այդուհանդերձ, Գառնու գավառում զորքը ոչ բոլորին է կարողացել գերեվարել՝ «թողեալ ի բաց գնացին». հասնում են Քոռադարա մեծ ձորը և «թէպէտ բազումք կային անդէն ի ձորն այրք և ամրոցք, յորում թաքուցեալք էին քրիստոնեայք, թողեալ զայլսն զամենայն՝ դիմեցին ի վերայ անուանի այրին՝ որում Եախըշխան այր[2] ասէին. զի վասն ամրութեան նորին բազումք էին անդ ժողովեալք արք և կանայք քրիստոնեայք, անձինք իբրև հազարք»[3]: Երկարատև շրջափակումից հետո մտնում են անձավ ու կոտորում մեծ մասին, իսկ փրկվածներին գերեվարում[4]:

Այսպիսով, շահ Աբասն «անմարդաբնակ արար միահաղոյն զամենալի և զյուռթի աշխարհս Հայոց», քանզի «ո՛չ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի Պարսկաստուն (Պարսկաստան – *Մ. Մ.*), այլ զբազումս: Եւ սկսեալ ի սահմանացն Նախչուանու և անցեալ ընդ Եղեգաձոր, առ եզերբ Գեղամայ, և Լօռւոյ, և զՀամզաչիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակուան, զՁարիշատ, և մասն ինչ ի գեղօրէիցն Կարսայ, և զձորն Կաղզվանու բնաւին, և բովանդակ զերկիրն Ալաշկերտու, և զգեղօրայսն Մակուայ, և զերկիրն Աղբակու և զՍալամաստու և զԽոյայ և զՈրմի (զՈւրմիոյ – *Մ. Մ.*), և որ ինչ պանդուխտք և ղարիպականք մնացեալք էին ի քաղաքն և ի գեղօրայսն Թարվիզու (Թավրիզու – *Մ. Մ.*), զդաշտն Արարատու բովանդակ, և զԵրևան քաղաք, զերկիրն Ղրխբուլաղայ, զԾաղկունուց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն: Եւ յառաջ քան զայս՝ զգաւառն Կարնոյ, և զԲասենու, և զԽնուսայ, և զՄանազկերտու, և զԱրծկէոյ, և զԱրճշոյ, և զԲերկրու, և զՎանայ աւարով և գերութեամբ բերեալ էին յԵրևան, և ընդ սոսա քշեցին և տարան»[5]:

Անգամ XVII դ. կեսին Առաքել Դավրիժեցին իր ժամանակի համար զանգատվում է. «Որ և այժմ տեսանեմք զարգաւանդ և զբերրի զհողս զարտ և զանդաստանս սորա, և զաւերակս բազմապատիկ գեղօրէիցն և զմեծանիստ աւանացն»[6]: Նշված տարածքներից Աղբակի բռնագաղթի մանրամասներին անդրադառնում է նաև Իսքանդար Մունշին: Ըստ այդմ՝ այստեղ քրիստոնյա բնակչությունը դիմադրություն է կազմակերպել, և նրանցից շուրջ հազար կանայք և երեխաներ, որպես ռազմագերիներ, տարվել են շահի մոտ՝ Թավրիզ[7]: Այս նկարագրությունը կարևոր ենք համարում, քանի որ գավառը հետագայում հայտնի է դառնում որպես գերազանցապես քրդաբնակ տարածք:

---

[1] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, գլ. Դ, էջ 83-84:

[2] Յախշխան քարանձավ. Գառնի գյուղի մոտ՝ Ազատ գետի վերին հոսանքում, տեղակայված քարանձավներից սա ամենամեծն է և կարող է տեղավորել շուրջ հազար մարդ (տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», կազմեցին՝ Թ. Հակոբյանը, Ստ. Մելիք-Բախշյանը, Հ. Բարսեղյանը, հ. 3, Երևան, 1991, էջ 915):

[3] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, գլ. Դ, էջ 84-85:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 85-86:

[5] Նույն տեղում, էջ 86-87:

[6] Նույն տեղում, էջ 87:

[7] Տե՛ս **Eskandar Beg Monshi**, v. II, p. 869-870:

Ինչ վերաբերում է Գեղամա եզերքի հիշատակմանը, ապա ակնհայտ է, որ այստեղ խոսքը Գեղարքունիքի միայն արևմտյան կեսի՝ Գեղամա լեռների լանջերի մասին է, մինչդեռ 1606 թ. Թիֆլիսից վերադառնալիս շահը Մազրայում հյուրընկալվել է հայոց մելիք Շահնազարի տանը և վերահաստատել նրա մելիքական ժառանգական իրավունքները[1]:

1650-ական թթ. հայ բնակչության՝ Սպահանի կենտրոնից արվարձաններ տեղափոխումը նկարագրելիս Առաքել Դավրիժեցին թվարկում է բռնագաղթի հետևանքով վերաբնակված հայության ծագման վայրերը՝ նշելով նաև Բաղեշը, Մուշը, Երզնկան, Դերջանը, Բաբերդը, Սպերը[2], որոնք բռնագաղթը նկարագրելիս պատմիչը չէր մատնանշել: Նման պարագայում անհրաժեշտ է դիմել դեպքերին մոտ մեկ այլ հեղինակի՝ Զաքարիա Քանաքեռցու տվյալներին: Բռնագաղթի ընդգրկած տարածքը նկարագրելիս նա գրում է. «Սկսեալ ի կողմանցն Նախչուանայ՝ զԵղեգաձոր, զԳեղամ, զԼօռի, զՀամզաչիման, զՆիգ, զՇարապխանայ, զՇիրակ, զԶարիշատ, և զգեղօրայսն Կարուց, և զձորն Կաղզուանայ, զԱլաշկերտ, զՄակու, զԱղբակ, զՍալմաստ, զԽոյ, զՈրմի, և զկողմն Թաւրիզու, զդաշտն Արարատու, զԵրևան քաղաք, զԿոտէս գավառ, զԾաղկնուձոր, զԳառնուձոր, զՈւրծաձոր, և որ զգաւառն Կարնոյ և զԲասենոյ՝ զԽնուս, զՄանազկերտ, զԱրծկէ, զԱրճեշ, զԲերկրի, և զամենայն գաւառսն Վանայ, և այլ ամենայն տեղից գերեաց և աւերեաց, այրեաց և հրդեհեաց զամենայն բնակութիւնսն, զի մի մնասցէ շէն»[3]:

Զաքարիա Քանաքեռցին, ինչպես տեսնում ենք, գրեթե նույնությամբ կրկնում է բռնագաղթի ընդգրկած տարածքը, ուստի անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև ժամանակագրական առումով դեպքերից ոչ ուշ գրված ձեռագրերի հիշատակարաններին: Պարսկաստանի Գյանդումանի նահանգի Քադաք գյուղում 1611 թ. գրված Ավետարանի հիշատակարանում գրիչ Զաքարիա Վանեցին նշում է, որ հրամայվեց գերելու «ազգս Հայոց», և «գերեցուցին զԿարս, զՇիրակունիս, զԲասեն, զԿաղզրւան, զԱղջաղալէն, զԱլաշկէրտ. զԳաւգ[սու] (զԳյոկսու – *Մ. Մ.*), [զԽ]նուս, զՄալ[ազ]կերտ, զԱիքլիս, զՏումանիս, զՉլդրը, զԱրտախան (զԱրտահան – *Մ. Մ.*), զԿոլայ (զԿող – *Մ. Մ.*), զՇաքի, զՇրւան, զՇամախի, զԲ[ա]նակ, զՓասկեր (իմա՝ Փանասկերտ – *Մ. Մ.*), զՅուխտիք (զՈւխտիք – *Մ. Մ.*), զՄամրվան, զԹաւրխուն (զԹորթում – *Մ. Մ.*), զՍեպեր, զԹէրջան (զԴերջան – *Մ. Մ.*), զԿամախ, զՎան, զԱրճէշ, զԱրծկէ, զԲերկրի, զ[Զ]արիշատ, զԵրեւան, զՆախչրւան, զՋուղայ, զԱղբակ, զՍալամաստ և այլ բազում գեաւղ և քաղաք…»[4]: Այստեղ Չլդրրի էյալեթի տարածքների հիշատակումը սկզբունքորեն տարբերվում է մյուս սկզբնաղբյուր-

---

[1] Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, գլ. Ը, էջ 114:

[2] Տե՛ս նույն տեղում, գլ. ԼԳ, էջ 352:

[3] **Զաքարիա Քանաքեռցի**, Պատմութիւն, աշխ.՝ Ա. Վիրաբյանի, Երևան, 2015, էջ 49:

[4] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, թիվ 518, էջ 411-412:

ների տեղանունների շարքից և չի հաստատվում այլ սկզբնաղբյուրներով:

1611 թ. գրված մեկ այլ հիշատակարանում բռնագաղթի ընդգրկած տարածքում նշված են Գանձակը, Նախիջևանը, Երևանը, Սալմաստը, Աղբակը, Վանը, Կարսը, Էրզրումը[1], որոնք, փաստորեն, բռնագաղթի հիմնական օջախներն էին:

Հովհաննավանքում ընդօրինակված Ժողովածուի 1631 թ. հիշատակարանում գրիչ Ղուկասը շարադրում է. «… Շահ Ապազ վերաձայն[է]ալ ի Ռ և ի ԾԳ (1604) թվին եկեալ յաշխարս Հայոց, ի յԱրարատեան տանէս և ի Գողթնեաց գաւառէ, մանաւանդ թէ զՋուղայ իսկ, բովանդակ տարեալ բնակեցոյց ի Շօշ քաղաք և ի շրջակա գաւառսն իւր տունք իբրև Ժ (10) հազար»[2]: Այստեղ, փաստորեն, բռնագաղթի մայր օջախ է նշվում Արարատյան կուսակալությունը՝ Գողթն գավառով հանդերձ: Նմանօրինակ հատվածական հիշատակումները երբեմն ստիպել են ուսումնասիրողներին կարծել, որ Առաքել Դավրիժեցու մատնանշած տարածքը չափազանցություն է, սակայն, մեր կարծիքով, այդ տեղեկությունների բնույթը պայմանավորված է հիշատակարանի գրչության վայրով, օրինակ՝ նախորդ դեպքում Հովհաննավանքը գտնվում էր Արարատյան կուսակալությունում, ուստի պետք է ներկայացներ հենց իր վարչամիավորի կրած վնասը: Նույն տրամաբանությամբ վերը նշված 10 հազար տունը միայն այդ հատված տեղափոխվածների թիվն է:

Նման մոտեցման արտացոլումն է 1608 թ. Բաբերդում Գրիգոր Դարանաղցու գրած հիշատակարանում բռնագաղթի ընդգրկած տարածքի ներկայացումը՝ Երևանի գավառներից մինչև Բասեն[3], քանի որ վերջինս, ինչպես և Բաբերդը, Էրզրումի նահանգի կազմում էր: Բաբերդում ընդօրինակված ձեռագրի 1638 թ. հիշատակարանում նույն Գրիգոր Դարանաղցին նշում է. «Նա թագաւորն Պարսից շահ Ապազն (Աբասն – *Մ. Մ.)* երեկ էառ զԵրևան և զամենայն գաւառքն մինչև ի Բասէն, և զամենայն աշխարհինին հրձիգ և աւերակ արար և զամենայն բնակիչքն թէ՛ Հայք, թէ՛ Տաճիկ՝ միահամուռն սուրկուն արար, և տարօ ի Սօս քաղաքին, որ է Իսպահէն»[4]: Նույն նահանգի բնակիչ Հակոբ Կարնեցին գրում է. «Բասենու հետ զազգս Հայոց սուրկուն արար տարաւ ի Սպահան»[5]:

Բասենի՝ որպես բռնագաղթի մայր օջախներից մեկի մասին հիշատակումների հանդիպում ենք նաև այլ սկզբնաղբյուրներում: Այսպես, Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրության (XVIII դ.) մեջ ևս առանձնակի շեշտվում է Բասենը. շահը «հասեալ մինչև ի Վան և զԲասեն աւերեաց: Եւ անտի

---

[1] Տե՛ս նույն տեղում, թիվ 549, էջ 448-450:

[2] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.)», հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978, թիվ 624, էջ 428:

[3] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, թիվ 407, էջ 328-329:

[4] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.)», հ. Բ, թիվ 1070, էջ 724:

[5] «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 240:

զամենայն ազգս Հայոց քշեաց, սկսեալ անտի մինչ Երևան: Եւ անտի բերեալ ափն Երասխ գետոյն, որ էր թիվ ՌԾԴ (1605) մուտ տարոյն: Ընդ նմին և գիւղաքաղաքն Ջուղայ քշեաց և տարաւ յԱսպահան բնակեցոյց և ի գաւառս նորայ սփռեաց: Այս է մէծ սուրգունն. որ և յետ Բ (2) ամի եղև սով սաստիկ, մինչ Գ (3) ամ, այնպէս որ մարդիք զմեռեալս և զկենդանիս սպանանեալ ուտէին, որ է սարսռելի ի լսելն»[1]: Այնուհետև ժամանակագիրը շարունակում է, որ շահը «յոյժ նեղեաց զազգս Հայոց և երկիրս Հայոց ցիր և ցան արար և անբնակ արար Հայաս տուն և ոչընչացոյց զերկիրն»[2]:

Մեկ այլ ժամանակագրության մեջ նշվում է. «Շահ Ապասն... զՀայոց ազգն քշեց Իսպահան, զԵրևան և զՆախչևան և զՋուղայ և զայլ կողմանսն՝ յԱլաշկերտու ի Խոյայ և տարաւ ի Գիլան և յՍպահան»[3]: Փաստորեն, կրկին համոզվում ենք, որ սկզբնաղբյուրի գրչության վայրի հանգամանքը երբեմն ազդել է հեղինակների վրա՝ բռնագաղթի ընդգրկումը միայն իրենց վարչա-միավորի տարածքում ներկայացնելու համար, քանի որ վերը ներկայացված օրինակներում հաստատվում է բռնագաղթի՝ աշխարհագրական այն մեծ ընդգրկումը, որ ներկայացնում է Առաքել Դավրիժեցին:

Տարհանված ջուղայեցի Արիստակես աբեղան բռնագաղթի ընդգրկած տարածքը նշում է «ի Ջուղայոյ մինչ ի Կարս ամենեքեան գերի վարեցան, ի ծերոց մինչև ցտղայն, որ երկիրն անբնակ եղև»[4]: Սա, փաստորեն, բռնա-գաղթի հիմնական արեալն էր:

Բռնագաղթի առնչությամբ հայագիտության մեջ մեծ տարածում ունի Աստվածատուր քահանայի 1605 թ. հիշատակարանը[5]: Նա պատմում է Թավ-րիզի գրավման ժամանակ շահ Աբասի կողմից քրիստոնյա բնակչության կոտորածի մասին (ըստ թուրքական սկզբնաղբյուրների՝ կոտորվել է քաղա-քի սուննի բնակչության մի մասը), այնուհետև երկու փուլով ներկայացնում է բռնագաղթը, մեկը՝ հայ և մուսուլման բնակչությանը Երևանից, Նախիջևա-նից և Սալմաստից դեպի Թավրիզ՝ այնտեղից հաջորդ տարի միայն հայերին՝ Սպահան, իսկ մյուսը՝ Կարսից, Շիրակից, Արծկեից, Արճեշից, Բերկրիից, Խնուսից՝ 300 հազար հայերի[6]: Ընդ որում՝ նախորդ հրատարակություններ-

---

[1] «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 428:

[2] Նույն տեղում, էջ 428:

[3] «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 324:

[4] «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, թիվ 226, էջ 184:

[5] Տե՛ս նույն տեղում, թիվ 225, էջ 181-183: Հմմտ. «Մի ձեռագիր Աւետարան Զարմահալի Լիվասեան գիւղում», կազմեց՝ Ա. Երեմեան // «ՀԱ», 1948, թիւ 3-6, սյ. 293-299, «Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի» // «Էջմիածին», 1950, թիվ Է-Ը, էջ 81-88, «Ցու-ցակ Թեհրանի հայերէն ձեռագիրներու», կազմեց՝ Հ. Ոսկեան // «ՀԱ», 1953, թիւ 1-3, սյ. 95-110, «ԺԵ դարի մի ձեռագիր Աւետարան», հրատ.՝ Ա. Երեմեան // «Սիոն», 1967, թիւ 7-8, էջ 328-330:

[6] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, թիվ 225, էջ 182: Այս թվաքանակի վերաբերյալ մեր ուսումնասիրությունը ներկայացնելու ենք առաջիկա հոդվածում:

ռում տեղանունների թվարկման շարքում պահպանվել է Երևանի, Նախիջևանի, Ջուղայի, Աղբակի և Սալմաստի թվարկումը, որը Վ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը, փաստորեն, կրճատել են իրենց տպագրածում:

Բռնագաղթի տարածքային ընդգրկման, փուլաբաժանման և հետևանքների խնդիրներին առնչվող նյութեր կան նաև բազմաթիվ այլ սկզբնաղբյուրներում, որոնք մենք ևս ուսումնասիրել ենք և խմբավորել դեռևս մեր թեկնածուական ատենախոսությունը շարադրելիս[1], սակայն նախատեսել ենք ներկայացնել արդեն ժողովրդագրական ընդգրկման խնդրի մասին առաջիկա հոդվածում: Հարկ է նկատել, որ հայերի բռնագաղթի մեկ այլ փուլ տեղի է ունեցել վրաց բռնագաղթի հետ, որն առանձին ուսումնասիրության թեմա է, թեև ընկալելի է դարձնում վերը նշված տարածքային թվարկումները:

Խնդրին առանձնահատուկ անդրադարձել է Գ. Բադալյանը, որը քարտեզագրել է բռնագաղթը: Ըստ նրա քարտեզի՝ այն ընդգրկել է Արարատյան կուսակալությունը, Վանա և Ուրմիո լճերի միջակայքը, Գանձակից մինչև Էրզրում և Թորթում ընկած տարածքը[2]: Ուշագրավ է, որ հայ մելիքների կողմից տնօրինվող Արցախը և Սյունիքի կենտրոնական ու արևելյան մասերը խուսափել են ժողովրդագրական այս արհավիրքից:

Ամբողջացնելով մեր ուսումնասիրությունը՝ հարկ ենք համարում փաստել, որ շահ Աբասի կազմակերպած բռնագաղթն ընդգրկել է ոչ միայն Արևելյան Հայաստանի Արարատյան կուսակալությունը (ներառյալ՝ Նախիջևանը), այլև Գանձակի գավառը, Ուրմիո, Սալմաստի, Խոյի, Մակուի վարչամիավորները, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի արևելյան և հյուսիսային մասերը, Էրզրումի նահանգի արևելյան ու կենտրոնական հատվածները և Կարսի նահանգն ամբողջությամբ:

Микаэл Малхасян – ***Вопрос территориального охвата депортации армянского населения, организованной шахом Аббасом I***

В начале турецко-персидской войны 1603-1612 гг. последствия боевых действий и в особенности запланированные меры персидских властей отрицательно повлияли на демографические процессы в Армении. Тяжелейшие последствия имела политика массовой депортации армянского населения, организованная персидским шахом Аббасом I (1587-1629 гг.) в 1603-1605 гг., основной этап которой имел место в 1604 г. В статье исследован вопрос территориального охвата массовой депортации. На основе многочис-

---

[1] Տե՛ս **Մալխասյան Մ.**, Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում XVI դարում-XVII դարի առաջին կեսին, Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսություն, Երևան, 2016:

[2] Տե՛ս «Հայերի բռնագաղթը Շահ-Աբաս 1-ինի կողմից Պարսկաստան XVII դ. սկզբին», հեղինակ՝ Գ. Բադալյան, մասշտաբ՝ 1:4 000 000: Տե՛ս՝ «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, Երևան, 2008, էջ 51: Տե՛ս նաև «Հայաստանը XVII դ. առաջին կեսին», հեղինակ՝ Գ. Բադալյան, մասշտաբ՝ 1:3 600 000, «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 50:

ленных армянских, персидских, турецких и европейских источников подтверждено, что эта политика проводилась в отношении армянского населения не только Восточной, но и Западной Армении. Сначала было организовано переселение армян из разных округов Чухур-Саадского (Араратского) эйалета и Гянджинского (Гандзакского) санджака на территорию между Ереваном и рекой Аракс. Затем, перед приходом основных сил войск Османской империи, шах Аббас велел проводить тактику выжженной земли на территории Западной Армении, в частности – уничтожить любые объекты сельскохозяйственного назначения с целью не допустить их использования наступающей турецкой армией. В контексте той же тактики шах велел переселить население Карсского эйалета, восточных и северных округов Ванского эйалета, центральных и восточных округов Эрзурумского эйалета на территорию Чухур-Саадского эйалета. Затем они вместе с местным и ранее передислоцированным населением были депортированы в Персию. Таким образом, эта политика отрицательно повлияла на демографическое состояние выше перечисленных территорий.

Mikayel Malkhasyan – ***The Issue of the Territorial Coverage of the Deportation of the Armenian Population Organized by Shah Abbas I***

At the beginning of the Turkish-Persian war of 1603-1612, the consequences of military operations and, in particular, planned actions by Persian authorities affected negatively the demographic processes in Armenia. The policy of mass deportation of the Armenian population, organized by Persian Shah Abbas I (1587-1629) in 1603-1605, had the most extensive consequences, the main stage of which took place in 1604. The issue of the territorial coverage of the mass deportation was investigated in this article. On the basis of a number of Armenian, Persian, Turkish, and European sources, it was confirmed that the policy was carried out against the Armenian population not only of Eastern, but also Western Armenia. At first, Armenians were resettled from various regions of Chukhur-Saad (Ararat) Eyalet and Gyanja (Gandzak) Sanjak to the territory between Yerevan and the River Araks. Thereafter, before the upcoming campaign of the main forces of the Ottoman army, Shah Abbas ordered to conduct the strategy of scorched-earth policy in the territory of Western Armenia, in particular to destroy the whole agricultural infrastructure in order to prevent its use by the attacking Ottoman troops. Within the context of the mentioned strategy, Shah Abbas ordered to resettle the population from Kars Eyalet, eastern and northern regions of Van Eyalet, central and eastern regions of Erzurum Eyalet to the territory of Chukhur-Saad Eyalet. After on, they, along with the previously relocated population, were deported to Persia. Thus, this policy adversely affected the demographic situation of the above mentioned territories.

Ներկայացվել է 27.06.2019
Գրախոսվել է 10.07.2019
Ընդունվել է տպագրության 05.11.2019